ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **14/04/2021**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Նիկոլայ Աբրահամյանը, Հայկ Ալեքսանյանը, Նարեկ Գալստյանը, Արման Գրիգորյանը, Արթուր Հարությունյանը, Էդգար Հովհաննիսյանը, Արմեն Քոսակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Աննա Զոբանյանը, Արմեն Պողոսյանը, Ջանինա Սարգսյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Վահագն Գևորգյանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Արուսյակ Առաքելյանը

Լսեցին
2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 03 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել 2021 թվականի ապրիլի 14-ի N 03 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին.

2) Աբովյան համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.

3) Աբովյանի համայնքապետարանի և համայնքային ենթակայության ոչ

առևտրային կազմակերպությունների օգտագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցների դուրս գրման մասին.

4) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 4-րդ միկրոշրջանի թիվ 1/104/8/1 հասցեում գտնվող հողամասը կառուցապատման իրավունքով «Սամկոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու մասին.

5) Աբովյան համայնքի ավագանու անդամ Հայկ Ալեքսանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

6) Աբովյան համայնքի ավագանու անդամ Նարեկ Գալստյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

7) Աբովյան համայնքի ավագանու անդամ Արման Գրիգորյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

8) Աբովյան համայնքի ավագանու անդամ Արթուր Հարությունյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

9) Աբովյան համայնքի ավագանու անդամ Անդրանիկ Նարինյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի «2021 թվականի համար Աբովյան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» N 70-Ն որոշման 2-րդ կետում «յուրաքանչյուր հենասյան» բառերից հետո լրացնել «1 լարանցման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14-Ն/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ի գիտություն ընդունել Աբովյան համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն հրամանի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Դուրս գրել Աբովյանի համայնքապետարանի և համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների օգտագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցները՝ համաձայն հավելված N 1-17-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 4-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ ԹԻՎ 1/104/8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՍԱՄԿՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և N 72-Ն որոշումների, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասը համարվում է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս և հաշվի առնելով «Սամկոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2021 թվականի փետրվարի 23-ի N S-111).

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2020 թվականի դեկտեմբերի 4-ի N 0412020-07-0054 վկայական) 4-րդ միկրոշրջանի թիվ 1/104/8/1 հասցեում գտնվող 1.0 քառակուսի մետր մակերեսով ընդհանուր օգտագործման հողամասը, կառուցապատման իրավունքով՝ գովազդային վահանակ տեղադրելու նպատակով, մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ը, տարեկան 3 500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ վճարով (համայնքապետարանի 900105201389 հաշվեհամարին) տրամադրել «Սամկոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Կառուցապատողը շինարարությունը կարող է սկսել համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվություն ստանալուց հետո: Նախագծման թույլտվություն ստանալու, նախագիծ մշակելու, շինարարության թույլտվություն ստանալու դիմում ներկայացնելու համար սահմանվում է 60-օրյա ժամկետ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. «Սամկոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման տրամադրման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

4. Սույն որոշումից ծագող իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է «Սամկոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Սամկոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՀԱՅԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՋԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Հայկ Ալեքսանյանը 2020 թվականի ընթացքում տեղի ունեցած ավագանու 12 նիստերից, 93 քվեարկություններից, մշտական հանձնաժողովի 4 նիստերից բացակայել է 10 նիստերից, 76 քվեարկություններից, մշտական հանձնաժողովի 1 նիստից, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Վաղաժամկետ դադարեցնել Աբովյան համայնքի ավագանու անդամ Հայկ Ալեքսանյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ – 0 դեմ – 8 ձեռնպահ – 0
Որոշումը չի ընդունվել

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՋԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Նարեկ Գալստյանը 2020 թվականի ընթացքում տեղի ունեցած ավագանու 12 նիստերից, 93 քվեարկություններից, մշտական հանձնաժողովի 4 նիստերից բացակայել է 5 նիստերից, 51 քվեարկություններից, մշտական հանձնաժողովի 1 նիստից, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Վաղաժամկետ դադարեցնել Աբովյան համայնքի ավագանու անդամ Նարեկ Գալստյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ – 0 դեմ – 8 ձեռնպահ – 0
Որոշումը չի ընդունվել

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՋԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Արման Գրիգորյանը 2020 թվականի ընթացքում տեղի ունեցած ավագանու 12 նիստերից, 93 քվեարկություններից,

մշտական հանձնաժողովի 4 նիստերից բացակայել է 12 նիստերից, 93 քվեարկություններից, մշտական հանձնաժողովի 4 նիստերից, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Վաղաժամկետ դադարեցնել Աբովյան համայնքի ավագանու անդամ Արման Գրիգորյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ – 0 դեմ – 8 ձեռնպահ – 0
Որոշումը չի ընդունվել

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՋԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Արթուր Հարությունյանը 2020 թվականի ընթացքում տեղի ունեցած ավագանու 12 նիստերից, 93 քվեարկություններից բացակայել է 12 նիստերից, 93 քվեարկություններից, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Վաղաժամկետ դադարեցնել Աբովյան համայնքի ավագանու անդամ Արթուր Հարությունյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ – 0 դեմ – 8 ձեռնպահ – 0
Որոշումը չի ընդունվել

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՐԻՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՋԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Անդրանիկ Նարինյանը 2020 թվականի ընթացքում տեղի ունեցած ավագանու 12 նիստերից, 93 քվեարկություններից, մշտական հանձնաժողովի 20 նիստերից բացակայել է 7 նիստերից, 56 քվեարկություններից, մշտական հանձնաժողովի 16 նիստերից, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Վաղաժամկետ դադարեցնել Աբովյան համայնքի ավագանու անդամ Անդրանիկ Նարինյանի լիազորությունները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ – 0 դեմ – 7 ձեռնպահ – 0 չի քվեարկել 1
Որոշումը չի ընդունվել

Ավագանու անդամներ

ՎԱՀԵ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԺԱՄՀԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԳՈՌ ՂԱԼԵՉՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՐԻՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՉԱՏՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արուսյակ Առաքելյանը